

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 46/2

13 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Մերիսոնա» ՍՊԸ 16.10.2015 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 10.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 302077/03 որոշման դեմ:

«Մերիսոնա» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

«Մերիսոնա» ՍՊԸ տնօրենը հայտնում է, որ 16.10.2015 թ-ին ստացել է ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 10.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 302077/03 որոշումն այն մասին, որ օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացվել 2015 թ-ի հունիս ամսվա եկամտային հարկի հաշվարկը:

«Մերիսոնա» ՍՊԸ տնօրենը հայտնում է նաև, որ «Մերիսոնա» ՍՊԸ-ն հանդիսանում է ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ, հետևաբար չի կրում ամսական եկամտային հարկի հաշվետվություն ներկայացնելու պարտականություն, քանի որ ներկայացնում է տարեկան եկամտային հարկի հաշվետվություն:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրում է չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 10.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 302077/03 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 25.09.2015 թ-ի 889 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ «Մերիսոնա» ՍՊԸ տնօրենը սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015 թ-ի հունիս ամսվա եկամտային հարկի հաշվարկը: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 1-ին մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 10.10.2015 թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 302077/03 որոշումը (այսուհետ նաև Որոշում) «Մերիսոնա» ՍՊԸ տնօրենի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին, այն է՝ կիրառել տուգանք 20.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում հաստատվեց այն հանգամանքը, որ «Մերիսոնա» ՍՊԸ-ն հանդիսանում է ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտները յուրաքանչյուր

հաշվետու տարվա համար մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 1-ը իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած՝

1) հաշվետվություն՝ գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացման շրջանառության վերաբերյալ.

2) անձնավորված հաշվետվություն՝ սույն հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված եկամուտների և դրանց մասով վճարված եկամտային հարկի վերաբերյալ»:

Վերոգրյալից հետևում է, որ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտները եկամտային հարկի ամսական հաշվարկներ ներկայացնելու պարտականություն չեն կրում:

Քննարկվող դեպքում «Մերիսոնա» ՍՊԸ տնօրենը վարչական պատասխանատվության է ենթարկվել մի խախտման համար, որը նրա կողմից չի կատարվել:

Վերոգրյալ փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ «Մերիսոնա» ՍՊԸ տնօրենի վարքագծում բացակայում է մեղքը: Այսինքն, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պատասխանատվության միջոցը տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ զանցակազմը լիարժեք չէ, արարքի սուբյեկտի կողմի՝ մեղքի բացակայության պատճառով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 10.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 302077/03 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



ՎՄԻՐՈՒՄՅԱՆ